

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ,
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆՑԻ և
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/4

ք. Երևան

«05» 02 2026 թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էմ Էս Կոմպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սարգիս Մաղաքյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սերվերային համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներքին տեղեկատվական ցանցի և հեռահաղորդակցման համակարգի սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե՝ մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17 770 000 (տասնյոթ միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/Հ 900011018695

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն

02698604

Գլխավոր քարտուղար

 Վ. Նասիրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էմ Էս Կոմպ» ՍՊԸ

Երեվան, քանաքեռ-գեյթոն, Ուլնեցու փ,

շ 51, բն. 1/1նկուղ

Հ/Հ 1570071809510100

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 00232251

Տնօրեն

 Ս. Մաղաքյան
(ստորագրություն)

Կ.Տ.

00232251

Հավելված N 1
« 05 » 02 20 թ. կնքված
ՀՀԷՆ-9ՀՇՁԲ-25-26/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

		Ծառայություն		չափման միավորը	ընդամենը գինը/ՀՀ դրամ	ընդամենը բանակը	մատուցման	
րով առված աժնի իրը	գնումների պատճեն միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը					հասցեն	ժամկետը*
	98111120/501 (CPV)	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում սերվերային համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներքին տեղեկատվական ցանցի և հեռահաղորդակցման համակարգի սպասարկման ծառայություններ: 1. Սերվերների, կոմուտատորների, երթուղիների, հրեպատերի և սերվերային համակարգերի մասնավոր աշխատանքներ - 15 հատ • Սերվերներ – 15 հատ • Գիծառալ մեքենաներ (ESXI, Vcenter) – 35 հատ • Կոմուտատորներ (cisco switch layer2, layer3) • Երթուղիներ և հրեպատեր (cisco, fortigate, mikrotik, zyxel) • Տվյալների պահեստավորման սերվերներ • Անխափան սնուցման սարքեր 1.1 Ապահովել վերը նշված տեխնիկայի անխափան և անվտանգ աշխատանքը 1.2 Ապահովել սերվերների վրա տեղադրված օպերացիոն համակարգերի (Linux, Windows, Vmware) անխափան աշխատանքը, կատարել կարգաբերումներ պարբերական թարմացումներ (արտադրողի կողմից նշված ժամկետներում), աներաժեշտության դեպքում ավելացնել նոր վիրտուալ սերվերներ • Օգտվողների կենտրոնացված համակարգ (Windows Active directory server) - ապահովել համակարգի անխափան և անվտանգ աշխատանքը, կատարել կարգաբերումներ և թարմացումներ, ավելացնել և կանցնել օգտվողներ, ինչպես նաև օգտվողների համակարգիչներում կատարել համապատասխան կարգաբերումներ, ստեղծել պահուստային active directory սերվեր և համակցել առկա համակարգին, ստեղծել ֆայլային սերվեր (file server), կատարել կարգաբերումներ և ապահովել համապատասխան թույլատվություններ ըստ օգտվողների և ստորաբաժանումների • Էլեկտրոնային փոստի համակարգ (Microsoft exchange Server) ապահովել համակարգի անխափան և անվտանգ աշխատանքը, կատարել կարգաբերումներ և թարմացումներ, ավելացնել և կանցնել օգտվողներ, ինչպես նաև օգտվողների համակարգիչներում կատարել համապատասխան կարգաբերումներ, տեղադրել SSL հավաստագիր տրված պատվիրատուի կողմից, ստեղծել պահուստային էլ-փոստի համակարգ և համակցել առկա համակարգին Համակարգի անխափան և անվտանգ աշխատանքը • Մոնիթորինգ և վերականգնում. Կիրառել համապատասխան մոնիթորինգի գործիքներ, որոնք թույլ են տալիս վերահսկել սերվերի աշխատանքը և համակարգի առողջությունը: Դարբերական ստուգումներ պետք է կատարվեն՝ խափանումների կանխարգելման համար: Սպասման պիկերի ժամանակ՝		դրամ	1	Մ.Սկրտ- չյան 5		

	անհրաժեշտ է վերահսկել հաղորդագրությունների սպասարկումը, սերվերի ծանրաբեռնվածությունը, համակարգի բաջետումները և ապահովել արագ արձագանքում: • Սերվերների թարմացումներ: Պարբերաբար կատարել թարմացումներ (patches)՝ նոր կիբեռնաբնույթի պաշտպանվելու համար: Սա ներառում է նաև անվտանգության թարմացումները, որոնք նվազեցնում են համակարգում բաջետումների կամ խոցելիությունների ռիսկը: • Անվտանգության միջոցառումներ: Կազմակերպել VPN և հեռախոսի կիրառություն, որպեսզի պաշտպանվի փոխանցումը և հասանելիությունը միայն իրավունք ունեցող օգտագործողներին: Պահպանել 2-բաժնի ակտիվացիա (2FA) օգտվողների համար, ինչպիսիք են ուժեղ գաղտնաբառերը կամ միջնորդավորված երաշխիքները՝ ապահովելով անվտանգ մուտք: Ընտրել SSL/TLS վավերական կապի համար (մասնավորապես, Exchange Online Protection)՝ պաշտպանելու համար փոստային հաղորդագրությունների անվտանգությունը: Կարգաբեռումներ և թարմացումներ • Անհրաժեշտ կարգաբեռումներ: Հաճախակի և թարմացված կարգաբեռումներ համակարգերում՝ ըստ նախարարության բաղադրականության, օրինակ՝ փոխել օգտագործողների իրավունքները, փոխել փոստի պահպանման բաղադրականությունը, նվազեցնել ալգամի տարածումը: Ներգրավվածության հաղորդագրությունները, ապագայում խնդիրներից խուսափելու համար պետք է առնվազն ճիշտ թույլտվություններ՝ ապահովելով միայն իրավասու օգտվողների մուտքը: • Թարմացումներ: Պարբերաբար թարմացնել Microsoft Exchange Server-ի տարբերակները: Երբեմն նոր թարմացումներ կան նորացումներ թողարկվում են, դրանք պետք է տեղադրվեն՝ համակարգի ավելի լավ աշխատանքն ապահովելու համար: Թարմացումները ներառում են ծրագրային փաթեթների նորոգում և անվտանգության թերությունների ուղղում: Օգտագործողների ավելացում և կանցում • Օգտագործողների ավելացում: Գործառնական օգտվողներ ավելացնել Exchange Server-ի վարչական կենտրոնում կամ Powershell-ի միջոցով: Նրանցից յուրաքանչյուրին անհրաժեշտ է տրամադրել հաշիվ (email), կարգավորել հաղորդագրությունների սահմանափակումը, պարամետրերը: Ընդհանրապես, պետք է նաև սահմանել օգտվողի իրավասությունները՝ նշելով, թե նա ինչպես կարող է օգտագործել էքսպրես փոստային հաշիվը: • Օգտագործողների կանցում: Երբ աշխատակիցը հրաժարվում է աշխատանքից կամ ժամանակավորապես չի օգտագործում էլ. փոստը, պետք է կանցվի նրա հաշիվը՝ ներառելով հնարավոր նախնիների պահպանություն կամ ուղղում: Կանցման միջոցով պետք է խուսափել տվյալների կորստից և սահմանափակել մուտքը առկա էլ. փոստին: Այս գործընթացը պետք է իրականացվի նաև նախքան աշխատակիցների հեռացումը: Օգտագործողների համակարգիչների կարգաբեռումներ • Համակարգիչի կոնֆիգուրացիա համակարգիչների վրա պետք է տեղադրվեն համապատասխան ստանդարտ ծրագրեր (Microsoft Outlook) և իրականացվի Exchange Server-ի կարգաբեռում՝ ճիշտ սերվերների կարգաբեռումներ: անվտանգ կապի ապահովում (SSL / TLS), ի սկզբանե կարգավորել հաշիվը: • Պարամետրերի համընթաց կարգաբեռում: Որպեսզի օգտվողները հնարավորություն ունենան հեշտությամբ միանալու Exchange-ի համակարգին, անհրաժեշտ է մուտք գործել իրենց հաշիվները՝ ճիշտ մուտքային և ելքային սերվերների պարամետրերով: Սա հնարավոր է անել ինչպես ավտոմատ, այնպես էլ ձեռքով՝ կախված համակարգի կոնֆիգուրացիայից: SSL հավաստագրի տեղադրում • SSL հավաստագրի տեղադրել: Ստանալ SSL վավերական հավաստագիր պատվիրատուի կողմից և տեղադրել այն Exchange Server-ի վրա և մնաց համակարգերում , որպեսզի ապահովվի անվտանգության բարձր մակարդակ: Այս գործողությունը անհրաժեշտ է ապահովելու համար, որ տվյալները հնարավորինս անվտանգ փոխանցվեն ցանցով: • Հավաստագրի կոնֆիգուրացիա: Հավաստագիր տեղադրել և պատշաճ կարգավորել. դա ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ SSL հավաստագրի վերագործարկում, ընդհանուր կարգավորումների փոփոխություն, սերտիֆիկատների զուգորդում Exchange Server-ի հետ: Պահուստային էլ. փոստի համակարգի տեղծում և համակցում	
--	---	--

• Պահուստային համակարգի տեղադրում: Ստեղծել պահուստային էլ. փոստի համակարգ (օրինակ՝ Exchange Server Database Availability Group (DAG)), որը թույլ կտա տվյալների վերականգնումը համակարգի խախտման դեպքում: Գործընթացը կարող է ներառել էլ. փոստի տվյալների պահուստավորումը (backup) և վերադարձումը՝ տվյալների կորուստը նվազեցնելու համար: • Համակցում առկա համակարգիչներ: Պահուստային համակարգի համակցումը հիմնական համակարգին պետք է իրականացվի այնպես, որ համակցված երկու համակարգերը աջակցեն միմյանց՝ ապահովելով էլ. փոստի հաղորդագրությունների հուսալի փոխանցում և միացման անխափան շարունակականություն: Այս բայով անհրաժեշտ է, որպեսզի պահուստային համակարգը կարողանա լիարժեք փոխարինել հիմնականը, եթե դրա հետ խնդիրներ առաջանան: Տվյալների պահուստավորում և վերականգնման պլան • Գործողությունները պետք է ներառեն նաև տվյալների պահուստավորման պլան, որը կօգնի վերականգնել էլ. փոստի տվյալները անհաջողության դեպքում: • Պահուստավորումը պետք է կատարվի պարբերաբար, որպեսզի թաքմ տվյալները միշտ մատչելի լինեն:	• Կատարել կայքերի պարբերական թարմացումներ՝ անվտանգության և նորարարությունների ապահովում, կայքի տեխնիկական սպասարկում՝ շահագործման ընթացքում: Համակարգի մանրամասն ուսումնասիրություն՝ բազերի և սխեմաների հայտնաբերման համար: Բազերի և սխեմաների շտկում: Ծրագրային կոդի մանրամասն ուսումնասիրություն՝ սխեմաների հայտնաբերում: Ծրագրային սխեմաների և անվտանգության խոցելիությունների շտկում: • Հակավիրուսային կենտրոնացված համակարգ – ներդնել և ապահովել բոլոր համակարգիչների համակցումը համակարգին, կատարել կարգաբերումներ կենտրոնացված կառավարման համար:	1.3 Կատարել կոնֆուստությունների կարգաբերումներ. «vlan» սեգմենտավորումներ ըստ սերվերների, վիրտուալ մեքենաների և ծառայությունների. անհրաժեշտության դեպքում կատարել օպերացիոն համակարգի թարմացում	1.4 Կատարել երթուղիչների կարգաբերումներ՝ 2 ինտերնետ կապի դինամիկ երթուղավորում (dynamic routing) և անհրաժեշտության դեպքում BGP երթուղավորում, համակարգիչների համար «traffic shaping», այլ պետական մարմինների հետ առանձնացված կապուղու սարքավորումների կարգաբերումներ և այլն	1.5 Կատարել հրեպատերի կարգաբերումներ՝ տարանջատում լոկալ ցանցի, սերվերային համակարգերի և ինտերնետի. ինտերնետից չարաննչ ներխուժումների կանցում (օգտագործելով IPS/IDS), ոչ անհրաժեշտ պրոտոնի բլոկավորում, ծածկագրված կապերի ստեղծում և այլն	1.6 Ներդնել տվյալների պահուստավորման համակարգ, որը թույլ կտա բոլոր սերվերային համակարգերի կրկնօրինակների պահպանումը: 1.7 Ընդհանուր նվազագույն • Սերվերային սարքավորումների մոնիտորինգ և թարմացումներ՝ սերվերների ֆիզիկական և ծրագրային ապահովման ստուգում: Օպերացիոն համակարգերի և հավելվածների ժամանակին թարմացում: Արտակարգ իրավիճակներում տվյալների վերականգնման պլան (Backup and Restore): Արդյունավետ աշխատանքի մոնիտորինգ (CPU, RAM, Storage): • Անվտանգություն Ֆայրվոլների (Firewall) կարգավորումներ և վերահսկում: Անվտանգության փաթեթների տեղադրում և թարմացում (Antivirus, Intrusion Prevention Systems): Օգտագործողների հասանելիության իրավունքի կարգավորում: • Համատեղելիություն և ինտեգրացիա՝ սերվերների կապ այլ համակարգերի և ցանցերի հետ:	Դուննային կառավարման համակարգերի սպասարկում (Active Directory, DNS, DHCP):
--	--	---	--	---	--	---

	- Համակարգչային տեխնիկայի սպասարկման համար պահանջներ՝ սարքավորումների տեխնիկական սպասարկում: Համակարգիչների (desktop) մաքրման և մասերի թարմացում: Ծրագրային ապահովման տեղադրում և թարմացում: Սարքավորումների ժամանակին փոխարինում: - Եշխատանքային փորձի ապահովում՝ համակարգիչների աշխատանքի արագության օպտիմիզացում: Պերիֆերիկ սարքերի (տպիչներ, սկաներներ և այլն) կապակցում և կարգավորում: - Հետևողական տեխնիկական գեկույցներ՝ սարքավորումների օգտագործման վիճակի վերլուծություն: Նոր սարքավորումների ներդրման արագարկներ: - Ներքին տեղեկատվական ցանց (LAN) պահանջներ սպասարկման համար՝ ցանցային սարքավորումների մոնիտորինգ: Ռոտերներ, սվիչերի և ցանցային այլ սարքերի աշխատանքային վիճակի ստուգում: Ներքին ցանցի թողունակության (bandwidth) մոնիտորինգ և արքավորումների թարմացում՝ ըստ նոր տեխնոլոգիաների: - Անվտանգության ապահովում՝ ներքին ցանցում կողակողված տվյալների փոխանցման ապահովում և օգտագործողների հասանելիության մոնիտորինգ: - Ցանցային ծառայությունների աշխատանք՝ տեղական սերվերների և տվյալների շտեմարանների ապահով աշխատանք և եռահար հասանելիության (VPN) կարգավորում և սպասարկում: - Հեռահաղորդակցական համակարգերի սպասարկման և տեղադրում պահանջներ՝ տելեկոմի սարքավորումներ IP հեռախոսների և զանգերի կառավարման համակարգերի սպասարկում: - Կոնֆերանսային կապի սարքավորումների թարմացում: Կապի որակի ապահովում անխափան ինտերնետ կապի կազմակերպում և կապի թողունակության և արագության պարբերական ստուգում: Անվտանգություն և հասանելիություն հեռահաղորդակցության համակարգերի պաշտպանություն կիբերհարձակումներից և օգտագործողների հասանելիության վերահսկում: 2 Համակարգիչների և համակարգչային տեխնիկայի սպասարկում՝ - Համակարգիչներ (ստացիոնար և դյուրակիր) – մինչև 400-480 հատ - տպիչ և բազմաֆունկցիոնալ ցանցային տպիչ սարքեր – մինչև 250-300 հատ - անխափան սեուցման սարք (UPS) – մինչև 350-400 հատ 2.1 ապահովել վերոնշյալ տեխնիկայի անխափան և անվտանգ աշխատանքը 2.2 կատարել համակարգիչների օպերացիոն համակարգի սպասարկում և պարբերական թարմացումներ, դրանում տեղադրված ծրագրային ապահովումների սպասարկում, անհրաժեշտության դեպքում նոր ծրագրերի տեղադրում և համակարգիչների մասերի փոխարինում 2.3. Օպերացիոն համակարգի սպասարկում և թարմացում: - Օպերացիոն համակարգի թարմացում՝ պարբերաբար կատարել օպերացիոն համակարգի վերջին թարմացումները (օրինակ՝ Windows, macOS կամ Linux թարմացումներ), որպեսզի ապահովվի անվտանգության աղբյուրների հասցեագրում, գործառնական և անվտանգության խնդիրների լուծում: 2.4 Ծրագրային ապահովման սպասարկում: - Ծրագրերի թարմացում՝ անհրաժեշտ է պարբերաբար թարմացնել տեղադրված ծրագրերը, հատկապես դրանք, որոնք ապահովում են համակարգի աշխատանքը, օրինակ՝ ինտերնետ բրաուզերները, գրասենյակային ծրագրերը (Microsoft Office), տվյալների շտեմարանները, վիդեո խմբագրման ծրագրերը և այլն: - Նոր ծրագրերի տեղադրում՝ եթե հայտնվում է նոր ծրագրային լուծումներ կամ լրացուցիչ գործիքներ, որոնք կարող են բարելավել համակարգի կամ կազմակերպության աշխատանքի արդյունավետությունը: դրանք պետք է տեղադրվեն՝ ապահովելով նախապես համակարգի համատեղելիությունը: - Անխաղ ծրագրերի հեռացում՝ ոչ օգտագործվող ծրագրերի հեռացումը կօգնի խուսափել համակարգի ծանրաբեռնվածությունից և ազատել տեղ:
--	--

						2.5 Համակարգչային սարքավորումների սպասարկում և մասերի փոխարինում: • Համակարգչի մասերի ստուգում՝ պարբերաբար ստուգել համակարգչի ֆիզիկական բաղադրիչները, ինչպիսիք են՝ hard disk-ները, հիշողությունը (RAM), սնուցման աղբյուրները, փոքր բարձրությունը և այլ բաղադրիչներ: Այս ստուգումներն օգնում են պարզել այն մասերը, որոնք կարող են հասնել իրենց ծառայության վերջնականին կամ գտնվում են վատ վիճակում: 2.6 Համակարգի անվտանգության բարելավում: • Հավաքված ծրագրերի թափանցում՝ տեղադրված հավաքված ծրագրերի պարբերական թափանցում և կարգաբերում՝ համակարգի պաշտպանությունն ապահովելու համար: • Ֆայլերի և տվյալների պահպանում՝ ապահովել նաև համակարգի տվյալների պարբերական պահուստավորում, որպեսզի խտասփել տվյալների կորուստից համակարգի խախտումների դեպքում: • Անվտանգության հետազոտություն՝ ապահովել համակարգի ինտեգրետային կապը մոնիթորինգի և ցանցի անվտանգության ստուգման միջոցով՝ խոստանելու համար չարամիտ ծրագրերից: 2.7 Համակարգի հզորության գնահատում: • Նոր ծրագրերի համար պահանջների գնահատում՝ համակարգի ընդունակությունը պետք է գնահատվի նոր ծրագրերի տեղադրելուց առաջ՝ հանգելու համար, որ համակարգը բավարար ձևություններ ունի նոր ծրագրերի աշխատունակության համար: • Համակարգի արագության վերլուծություն՝ տարբեր գործիքներով գնահատել համակարգի արագությունն ու կատարողականությունը, որոնք կօգնեն պարզել, թե որտեղ պետք է կատարվեն բարելավումներ: 2.8 Հետադարձ կապի ապահովում: • Համակարգի գնահատման գործընթաց՝ պարբերաբար ստուգել համակարգի բոլոր մասերը՝ վերջնական օգտվողների հետ աշխատելիս: Այն թույլ կտա կարգավորել և վերականգնել համակարգի հետ կապված ցանկացած հարց: • Դիմումային աջակցության համակարգ՝ խնդիրների հայտնաբերման ու լուծման համար ստեղծել աջակցության համակարգ, որտեղ օգտվողները կարող են հաղորդել համակարգի հետ կապված խնդիրներ: 2.9 տափչ արքերի բարթիչների փոխարինում գնված պատվիրատուի կողմից, ցանցային տափչ արքերի կարգաբերում 2.10 անխախտ սնուցման արքերի մարտկոցների փոխարինում 3 Ներքին տեղեկատվական ցանցի, դրանում գտնվող ցանցային սարքավորումների սպասարկում՝ • Կոմտատորներ (switch layer2) – մինչև 60 հատ • անկար ցանցի արքեր (wifi) – մինչև 45 հատ 3.1 ապահովել ներքին ցանցի անխախտ և անվտանգ աշխատանքը 3.2 կատարել կարգաբերումներ և թափանցումներ, ըստ «VLAN»-ների սեգմենտավորում, «STP» տեխնոլոգիայի կիրառում, անհրաժեշտության դեպքում «port security»-ի կիրառում: 3.3 Նշված բոլոր աշխատանքները կատարվում են տեխնիկական անխախտ աշխատանքն ապահովելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում, վթարների, հրդեհի, մարդկանցի վնասվածքի կամ արքերի խախտման ժամանակ:
--	--	--	--	--	--	--

	Ա և Բ մասնաշենքերի սենյակներում և հարկերում անցկացվել նոր մայրիկներ պլաստման մայրիկատարներով, տեղադրել ցանցային պահարաններ և կատարել մոնտաժային աշխատանքներ, տեղադրել ցանցային վարդակներ, տեղադրել անլար կապուղու սարքեր: Նոր մայրիկների անցկացման աշխատանքներ: • Մայրիկների անցկացման համակարգի տեղադրում՝ ըստ նախագծի, պետք է անցկացվեն նոր մայրիկներ Ա և Բ մասնաշենքերի սենյակներում և հարկերում: • Պլաստման մայրիկատարների օգտագործում՝ մայրիկների անվտանգությունն ապահովելու համար պետք է օգտագործվեն պլաստման մայրիկատարներ, որոնք կհանգեցնեն մայրիկների երկարաժամկետ ծառայությանը, ապահովելով նաև խրերի պաշտպանություն վնասվածքներից: 3.5 Ցանցային պահարանների տեղադրում: • Ցանցային պահարանների տեղադրում՝ նախատեսված է տեղադրել ցանցային պահարաններ, որոնք կապահայանեն բոլոր անցող մայրիկները՝ ապահովելով դրանք անվտանգ և հեշտ մոտքագրելի: 3.6 Մոնտաժային աշխատանքներ: • Մոնտաժային աշխատանքների իրականացում՝ այս աշխատանքների շրջանակում իրականացվում են մայրիկների միացման, տեղադրման և համակարգերի կարգավորման աշխատանքներ՝ ապահովելով էլեկտրական կամ հաղորդակցական համակարգի ամբողջական աշխատանքը: • Մոնտաժային աշխատանքները կարող են ներառել նաև սարքերի տեղադրում, միացում և համապատասխան կարգաբերում: 3.7 Ցանցային վարդակների տեղադրում: • Ցանցային վարդակների տեղադրում՝ նախատեսված է տեղադրել ցանցային վարդակներ, որոնք պետք է օգտագործվեն սարքերի և համակարգերի միացման համար: • Վարդակները պետք է լինեն անվտանգ և ապահով, որպեսզի թույլ տան մշտական կապ հաստատել համակարգերի միջև: 3.8 Անլար կապուղու սարքերի տեղադրում: • Անլար կապուղու սարքերի տեղադրում՝ այս սարքերը ապահովում են կապը առանց մայրիկային կապերի, ինչը բարելավում է համակարգի ճկունությունը և արագությունը: • Անլար սարքերը կարող են լինել Wi-Fi, Bluetooth կամ այլ կապուղու սարքեր, որոնք կապում են սարքերը և համակարգերը անլար միջավայրում: 3.9 Ապամոնտաժման աշխատանքներ: • Ապամոնտաժում՝ այս փուլում պետք է իրականացվի հին կամ ոչ օգտագործվող սարքերի, մայրիկների և համակարգերի ապամոնտաժում: • Ապամոնտաժումն անհրաժեշտ է, եթե նախորդ համակարգերն արդեն չեն համապատասխանում տեխնիկական պահանջներին կամ տեխնոլոգիական վերափոխման անհրաժեշտություն կա: 4 Իրականացնել SS սարքավորումների և համակարգերի գույքագրում ըստ պահանջի: 4.1 SS սարքավորումների ու համակարգերի ցանկի կազմում: • Պարզել պահանջները՝ պետք է Նշվի այն սարքավորումների և համակարգերի տեսակները, որոնք պետք է գույքագրվեն: Այսպիսով, պետք է իմանալ, թե ինչ տեսակի SS սարքեր (համակարգիչներ, սերվերներ, ցանցային սարքեր, պերֆերաժային սարքեր) կամ ծրագրեր պետք է ընդգրկվեն գույքագրման մեջ:	
--	---	--

					• Սարքերի նկարագրություն՝ յուրաքանչյուր սարքի համար նշվում են որոշակի տվյալներ, ինչպիսիք են՝ մակիթշը, մոդելը, մատակարարը, օգտագործման ամսաթիվը, սերիալական համարը, տեխնիկական բնութագրերը, գտնվելու վայրը (սենյակ, հարկ, տեղակայման վայր) և այլ մանրամասներ: SS համակարգերի աշխատանքային վիճակի գնահատում: • Հաշվառման վիճակի գնահատում՝ պետք է կատարեն յուրաքանչյուր սարքավորման տեխնիկական վիճակի, գործառնական վիճակի և ակտիվության գնահատում՝ որոշելու համար, թե որ սարքեր և համակարգեր պետք է պահվեն կամ ենթարկվեն վերանորոգման: • Սարքերի սպասարկման պահանջները՝ պետք է բացահայտվեն այն սարքերը, որոնք կարիք ունեն վերանորոգման, խափանումների կամ նոր տեխնոլոգիական լուծումների՝ միտելով բարելավել տեխնիկական գործունակությունը: SS սարքավորումների և համակարգերի տեղադրման/փոխարկման ընթացակարգեր: • Տեղակայման տեղաբաշխում՝ յուրաքանչյուր SS սարքավորումը պետք է տեղադրվի կամ տեղափոխվի գույքագրված տեղում, որտեղ այն մոնտաժվելու կամ վերահսկվելու է ըստ անհրաժեշտության: • Թարմացում/վերափոխում՝ եթե տեխնոլոգիական պահանջները փոփոխվել են կամ սարքավորումները ինացել են, ապա պետք է որոշում կայացվի՝ արդյո՞ք դրանք պետք է փոխարինվեն նորով: Գույքագրման համակարգի ու ծրագրերի ներդրում: • Գույքագրման տրտալորման համակարգ՝ օգտագործեն համապատասխան ծրագրեր կամ համակարգեր (օրինակ՝ CMDB (Configuration Management Database), asset management tools)՝ սարքավորումների հետևողական և անբողջական հաշվառումը կազմավերելու համար: • Դիտարկման և թարմացման միջոցառումներ՝ հարմար է ունենալ ակտիվացված գործընթաց, որը թույլ է տալիս գույքագրված տվյալների մշտական թարմացում, նոր սարքավորումների ավելացում և հին սարքերի հեռացում: Գույքագրման ընթացակարգի փաստաթղթավորում: • Տեղեկատվություն և հաշվետվություններ՝ պետք է պատրաստվեն անհրաժեշտ փաստաթղթեր և հաշվետվություններ՝ ներկայացնելու տեխնիկական վերանայման արդյունքները, սարքավորումների թարմացումները և համակարգերի աշխատանքի վիճակը: • Վիճակի և որոշումների ներկայացում ղեկավարությանը՝ անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր արդյունքները ներկայացվեն համապատասխան պաշտոնյաներին կամ ղեկավարությանը, և հինք ծառայեն հետագա որոշումների համար: Համակարգերի մշտական մոնիթորինգ և թարմացում: • Գույքագրված SS սարքավորումները պետք է պարբերաբար ստուգվեն և թարմացվեն՝ այս կերպ ապահովելով համակարգի արդյունավետ գործարկումը: Հատկապես կարևոր է պաշտպանական ծրագրեր, հակավիրուսային ծրագրեր և այլ ցանցային անվտանգություն ապահովող միջոցառումների մշտական թարմացումը: 5 Մոնիթորինգ համակարգի ներդրում, որը պետք է ռեալ ժամանակում մշտադիտարկի սերվերային համակարգերը, ցանցային սարքավորումները և ինտերնետը: 6 Ստեղծել սերվերային համակարգերի և ներքին ցանցի աշխատանքային գծագրեր և հետևել դրանց արդիականությանը՝ ըստ պահանջի: 7 Հայտնել կառավարման համակարգ ներդրում, որի միջոցով պետք է կազմակերպվի SS խնդիրների հայտնաբերման, գրանցման, և խնդիրների կարգավորումը, որը պետք է հաստատված լինի պատվիրատուի կողմից: 8 Կատարողը պարտավոր է ապահովել տեսահսկման համակարգի և տեսահսկիչների անխափան և անվտանգ աշխատանքը:
--	--	--	--	--	--

	9 Տեղեկատվական համակարգերի կառավարման և կիրառման համար, մշակել ստանդարտներ համապատասխան ISO 27001-ի, որոնցով կիրականացվի աշխատակիցների և սպասարկող անձնակազմի գործունեությունը հաշվի առնելով տվյալների անվտանգության պահպանումը: 10 Կատարողը պարտավորվում է պատվիրատուի շնորհ տարածքում նախատեսված աշխատանքնյակում ապահովել առնվազն երկու SS մասնագետ և երկու հետադարձ ինտերֆեյս 24/7, լայնացավալ խնդրի դեպքում մատակարարող պարտադր է ևս 2 աշխատակից խնդիրները կարգադրելու համար SS մասնագետների տրամադրումը • Մասնագետների փորձը և որակավորումը: SS մասնագետները պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և փորձ՝ կատարելու աշխատանքներ, որոնք ներառում են համակարգերի տեղադրում, խնամք, թարմացումներ, առկա համակարգերի ուսումնասիրություն, սխալների հայտնաբերում և շտկում: SS մասնագետների պարտականությունները • Տեխնիկական աջակցություն: Մասնագետները պետք է տրամադրեն տեխնիկական աջակցություն աշխատակիցներին՝ հարցերի և խնդիրների լուծման համար: Նրանք պետք է կարողանան արագ արձագանքել տեխնիկական խնդրի առաջացման դեպքում: • Համակարգերի կարգաբերում: SS մասնագետները պետք է պատասխանատվություն կրեն համակարգերի կարգաբերման և թարմացումների համար՝ ապահովելով համակարգերի անվտանգությունը և կատարողականությունը: • Խնդիրների շտկում և մոնիտորինգ: Մասնագետները պետք է համակարգեն սխալները, ապահովեն կայքերի և սերվերների անխափան աշխատանքը, շտկեն դրանց առաջացած խնդիրները և իրականացնեն բազերի շտկման աշխատանքներ: Պարտավորությունների իրականացման ժամկետներ • Աշխատանքային ժամեր և ներկայություն: SS մասնագետները պետք է լինեն տեղում՝ ըստ նախնական պայմանադրվածությունների կամ համաձայնեցված աշխատանքային ժամերի, որպեսզի ապահովեն շարունակական աջակցություն և կատարողական բարձր մակարդակ: • Պարբերական թարմացումներ և վերահսկողություն: Պատվիրատուի կողմից սահմանված աշխատանքների իրականացման ընթացքում, պետք է պարբերաբար ստուգումներ անցկացվեն՝ տեխնիկական մակարդակի բարձրացման համար: Համակարգի և ծրագրերի սպասարկում • Համակարգի վերլուծություն: SS մասնագետները պետք է մշտապես ուսումնասիրեն համակարգի արդյունավետությունը, հայտնաբերեն սխալները և անհրաժեշտության դեպքում, կատարեն տեխնիկական աջակցություն, օրինակ՝ բազերի և սխալների շտկում, կամ ծրագրային ապահովման տեղադրում: • Անվտանգություն և թարմացումներ: Մասնագետները պետք է հետևեն անվտանգության թարմացումներին՝ խուսափելու համար կայքի և համակարգերի հնարավոր խոցելիություններից: Համագործակցություն պատվիրատուի հետ • Տեղեկատվության հաղորդում: Մասնագետները պետք է մշտապես կապի մեջ լինեն պատվիրատուի հետ՝ աշխատանքային տեխնիկական հարցերի լուծման համար: • Տեխնիկական հաշվետվություններ: Մասնագետները կարող են կազմել հաշվետվություններ և առաջարկություններ՝ պատվիրատուին տեղեկացնելու համար կատարված աշխատանքների և կատարված թարմացումների մասին: 11 SS աշխատակիցների աշխատանքային ժամերը պետք է համընկնեն պատվիրատուի աշխատանքային գրաֆիկին և համաձայնեցված լինեն պատվիրատուի հետ: 12 Կատարողը պարտավորվում է տրամադրել անսակա հաշվետվություն կատարված աշխատանքների և պլանավորված աշխատանքների մասով:	
--	--	--

	13 Կատարողը պարտավորվում է տրամադրել սերվերային սարքավորումների անվագն է մեկ տարի երաշխիքային ապաստարկում: Այս ընթացքում բոլոր տեխնիկական խնդիրները պետք է շտկվեն անվճար: 14 Կատարողը պարտավոր է պահպանել պատվիրատուի տրամադրած սարքավորումների և տեղեկատվության գաղտնիությունը: • <i>Պայմանագրի պայմանները կիրառվելու են մինչև Համաձայնագիր կստանալը՝ 01.01.2018-ից կազմվող մինչև փաստացի ծառայության ավարտվելու և հետագայում կիրառվելու են:</i>									
--	--	--	--	--	--	--	--	--	--	--

յության մարտնչական ժամկետը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 360 րոպեի օրվա ընթացքում:

ուժը կատարվելու է փուլային տարբերակով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
 ՀՀ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն
 02698604
 Գլխավոր քարտուղար

Ն. Նաիրյան
 (ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԷՄ Էս Կոմպ» ՍՊԸ
 Երևան, քանաքեռ-գեյթոն, Ուլենցու փ.,
 251, բն. 1/1նկուղ
 Հ/Հ 1570071809510100
 «Ամերիկաբանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 00232251
 Տնօրեն

Ս. Մարգարյան
 (ստորագրություն)



Հավելված N 2
 « 05 » 02 20 թ. կնքված
 ՀՀԷՆ-ԳՀԾԶԲ-25-26/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այլ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
			Ընդամենը											
1	98111120/501	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում սերվերային համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներքին տեղեկատվական ցանցի և հեռահաղորդակցման համակարգի սպասարկման ծառայություններ	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
			%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
 ՀՀ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
 Հ/Հ 900011018695
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
 02698604
 Գլխավոր քարտուղար
 _____ Վ. Նասիբյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Էմ Էս Կոմպ» ՍՊԸ
 Երեվան, քանաքեռ-գեյթոն, Ուլնեցու փ.
 2 51, բն. 1/1նկուղ
 Հ/Հ 1570071809510100
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 00232251
 Տնօրեն
 _____ Ս.Մաղաբյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

Հավելված 3
« 05 » 02 20 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
» « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման ժամկ ետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և
դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 05 » 02 20 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Հավելված N 4
« 05 » 02 20 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25-26/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈԻՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____ -ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.